խառնից. այրւելով օդի մէջ միանում է նրա թթուածնի հետ և բաղկացնում է ածխաթթու և ջուր։ Սա է պատճառը, որ քարէածխեան հանքերում հրդեհ պատահելու ժամանակ, եթէ պատահում է, որ մարդիկը չեն այրւում (չար հոգին), ապա խեղդւում են ածխաթթուից, որ ինչպէս յայտնի է թունաւոր ներգործում է մարմնի կազմութեան։ Այդ բոլոր փորձանքների առաջը առաւ Անգլիացի ուսումնականը Գումֆրի Դէվին. նա հնարեց նախապահպանողական կանթեղը (предохранительная лампа) որ հիմնուած է տաքութեան երևելի յատկութիւններից մէկի վերայ։

Բնութեան այսպիսի երևելի գանձը հին ժամանակներից արդէն դարձրած էր իւր վերայ ուշադրութիւն։ Շատ հին ժամանակներից կրակապաշտ հնդիկները Սուրախանի տեղափոխուելով շինել են զանգակատուն, խցեր և աղօթարան։ Իբրև սրբատեղ մինչև այսօր զանազան չարչարանքների և նեղութիւնների համբերելով և հաւատքի եռանդով լիքը՝ կրակապաշտ հնդիկները գալիս են այդտեղ, ուր կենալով մի քանի ժամանակ և հասնելով իւրեանց նպատակին կրկին յետ են դառնում իւրեանց մայրենի երկիրը։ Միայն մէկը միշտ մնում է այդտեղ, ինչպէս աբբան կամ վանահայրը վանքի մէջ. Նրա տեղը շատ տարիներ անցնելուց յետ բռնում է միւս հնդիկը և այլն։ Սուրախանում այժմ կայ միայն մի հնդիկ։ Զանգակատան մէջ կան մի քանի զանգակներ վերևից կախուած. իսկ ներքև մի խորութիւն, ուր կայ մի փոքրիկ ծակ, ուրտեղից դուրս է գալիս գազը, որ հնդիկը վառում է երեկոները։ Խցերը, որոց թիւը կը լինի տասն և աւելի, այժմ բոլորն էլ դատարկ են. Նրանց պատերն լիքն են զանազան պարսկերէն, արաբերէն, շատ դժուար հասկանալի փորագրուածներով։ Աղօթարանը բաղկացած է մի սենեակից, որ մի արշին բարձրութեամբ կիսապատով բաժանուած է երկու մասը մէկը մեծ, միւսը փոքրիկ։ Մեծ բաժնումը ապրում է հնդիկը և գիշերում. իսկ փոքրիկ բաժնումը կատարում է աղօթքը և պաշտօնները։

Փոքրիկ բաժնի մի անկիւնում կայ մի փոքրիկ բարձրութիւն, որոյ վերա կայ փոքրիկ խորութիւն, այդտեղ դրած են մի քանի քարեր միմեանց վերայ, դա սեղանն է. դրա չորս կողմով վառւում են կրակներ։ Աղօթքը սկսւում է նրանով, որ մի զանգակիկ առնելով ձեռը, հնդիկը սկսում է զնգացնել և բարձրաձայն երգել երեսը դարձրած դէպի սեղանը։ Այդ ձայնը և եղանակը թէև ոչինչ մի քաղցրութիւն կամ տխրութիւն չունին, սակայն մի գաղտնի տպաւորութիւն ունեցան ինձ վերա և հին մանկական յիշողութիւններ էին միտք բերում։ Աղօթքը կատարւում է մի անհասկանալի լեզուով, ի հարկէ հնդկական, որ յառաջացած է սանսկրիտից։

Վերջացնելով աղօթքը հնդիկը սաստիկ խփում է երեք անգամ մի զանգակ, որ կախուած է կիսապատի մօտ առաստաղից (օճառքից). յետոյ մի փոքրիկ պատուհանից (սեղանից ձախ) վեր է առնում մի փոքրիկ աման, միջին տասը կտորից աւելի սառչաքար (նաբաթ) դրուած և զանազան գոյներով ներկուած, առհասարակ պարզ և մուգ կարմիր և մօտեցնում է հանդիսականներին։ Հանդիսականները, որ ինչպէս եկել են նորան տեսնելու, պէտք է վեր առնեն այդ քաղցրեղէնից մի կտոր և նրա փոխարէն գձեն մի քանի կոպէկ փող, որանով և վերջանում է բոլորը։ Բաղուայ հայերը և Թուրքերը հնդիկին անուանում են մոլթանի։

Այս հնդիկներից մէկը (սա լսած եմ ուրիշներից) ասում էր, որ իբր կրակը ոչ թէ համարում են նրանք իբր աստուած. այլ մի կենդանացուցիչ նիւթ, որով զարգանում են բոլոր կենդանիք և բուսականութիւնք։ (Սա բնագիտական պարզ և ստոյգ իդէայ չէ)։ Բացի այդ իբր թէ նրանց հաւատքը մեծ կապ ունի միւս ազգերի հաւատքի հետ. Բրահման մի և նոյնն է թէ Աբրահամը...

Բացի հնդկի բնակութիւնից կրակը (գազը) դուրս է գալիս Սուրախանիում շատ տեղերից, որ արհեստագործութեան մէջ ունի շատ մեծ նշանակութիւն. նաւթը մաքրում են և կիրը այրում են այդ գազով. նաւթի գտնելու և մաքրելու համար կհաղորդեմ միւս անգամները. իսկ կրի վերա կասեմ, որ գազի հորի բերանի չորս կողմով շարում են քարերով (որ պէտք է այրել) և թողնում են մի քանի շատ փոքրիկ ծակեր, բոցը դուրս գալու համար. վառում են գազը և ստանում են կիր, որ բերում են քաղաք վաճառելու։ Միտք կար այդ գազը քաղաք բերելու Սուրախանիից կամ ծովային կրակներից. բայց մինչև այժմ դեռ ոչինչ որոշուած չկայ. ինչպէս լինի չլինի Սուրախանիից գազ բերելը դժուար է իւր հեռաւորութեամբ. իսկ ծովայինը կարելի է առանց մեծ ծախսի և հեշտութեամբ հասցնել քաղաք։ Վերջացնելով նամակս կյաւելացնեմ, որ գազով նաւթ մաքրելու համար կան Սուրախանում երկու մեծ գործարաններ մէկը Կօկօրովի միւսը Միրզօեվի. առաջինը թէ շինուածքով թէ մաքրելու եղանակներով գերազանցում է վերջինից։

Ալեքսանդր Քալանթարեանց

ՆԱՄԱԿ ԱՂԴԱՇԻՑ

Նկատելով, որ «Մշակը» իւրն համար ճանապարհ է բռնել գործնական հարցերով պարապել, ես էլ այս անգամ կամենում եմ գրել Նուխուայ գաւառումը, Աղդաշ կոչեցեալ տեղի նկարագիրը, որովհետև Նուխուայ գլխաւոր եկամուտ բերող տեղերից մէկն էլ դա է։

Աղդաշն ինքն ըստ իրեան մի մեծ գիւղ չէ, այլ մի քանի փոքրիկ գիւղեր, ոչ հեռու միմեանցից միատեղ հաւաքված. այդ անունն են կրում և գտնվում են Կուր գետի աջ կողմումը. հիւսիսային լայնութեամբ 40° և արևելեան երկայնութեամբ 65°-ի տակ. մի ընդարձակ և կանաչ դաշտավայրում, շրջակայքը լի գլխաւորապէս վայրի նուռն թփերով։ Այս գիւղերը ջրից պակասութիւն չունին, որովհետև բաւականի մեծ առուներ են վազում այգիների և տնկի առաջև գտնված գալար թփերի միջով։ Չնայելով որ սոքա գտնվում են այս գծերի տակ, այնու ամենայնիւ տեղի կլիման (օդաբաժինը) շատ չոր է. ամառն ջերմութիւնը 45 դրագուսի է հասնում, չունենալով շրջակայքում՝ թէ լեռներ և թէ խիտ անտառներ. իսկ ընդ հակառակը ձմեռն աւելի բարեխառն է լինում։

Հողի յատկութիւնը այն աստիճանի խոնաւ է, որ եթէ մէկ կամ երկու արշին խորութեամբ գետինը փորես, կը տեսնես բաւականի ջուր հողի հետ խառն։ (Տեղացիք այս ջրին գարասու են ասում)։ Այդ խոնաւութիւնը ամառուայ սաստիկ շոգի հետ միանալով պատճառ են լինում այստեղի աղքատ բնակիչներին տենդի, ջերմի և այլ համանման հիւանդութեանց։ Մանաւանդ օտարականների վրա աւելի վատ և զգալի ազդեցութիւն է անում այստեղի յատկացած ջերմը և վատթար կլիման։

Այստեղի ժողովուրդը կրօնքով Սիւննի է, քանակութեամբ չորս հարիւր տուն, որոնք գլխաւորապէս պարապում են շերամապահութեամբ և երկրագործութեամբ։ Երկրի բերքն է՝ ցորեան, գարի, բրինձ, տորոն և նորերումս էլ սկսած են բամբակ ցանել։ Իսկ պտղատու ծառերն են՝ տանձի, խնձորի, սալորի, ունաբի, թզենի, խաղողի, թթենի, սերկևլի, ընկոյզի, մաշկա մրգի, կեռասի և այլն և այլն։

Մէկ խօսքով կարելի է ասել, որ այստեղի հողն ընդունակ է ամենայն բան առատութեամբ դուրս բերելու, բայց ինչ անես, ժողովրդեան յետին աղքատութիւնից, շրջակայքի ահագին տարածութեամբ մարգագետինները ամայի ընկած են։

Յիրաւի, եթէ շրջակայքումը սկսէր մշակութիւնը և եթէ տեղացիք ունենային գումար պտղատու ծառերը բազմացնելու և վար ու ցանքը բարւոքելու համար, այն ժամանակն այստեղի օդի վնասակարութիւնը ևս կը փոխվէր և այսպիսի մի գիւղը, երևելի վաճառականական քաղաքի ձև կառնէր։

Աղդաշից ոչ հեռու գտնվում է Շուշեցի Գանջեցեանների գեղեցիկ և ընդարձակ կարավանսարան և շրջակայքումը բաւականի կրպակներ ուրիշներին պատկանող. որոնցում մանրավաճառութեամբ պարապում են մօտ երկու հարիւրի չափ Հայեր։ Իսկ ամառը, երբ կիրակի օրերն այդտեղ տօնավաճառ է լինում, դոցա թիւն հազարի է հասնում. որոնք շրջակայ քաղաքներից և գիւղերից, զօրօրինակ, Նուխուց, Շամախուց, Փոթիից, Գիօզչայից և այլ մերձակայ տեղերից, կտաւեղէն և չթեղէն են բերում տեղական բերքի հետ փոխում և կամ պարտքով առևտուր են անում։

Հարկ եմ համարում յիշել, որ Գանջեցեանք բացի կարավանսարան ունին գործարան մետաքսի բոժոժ չորացնելու և հակեր կապելու։

Ճշմարիտ, աւելի լաւ կը լինէր, որ մեր մանրավաճառներից գոնէ կէսը պարապէին այս տեղերում երկրագործութեամբ և շերամապահութեամբ. բայց չէ. Նոքա հետևում են իրանց հայրերի օրինակին, թողնելով այսպիսի բերրի և մշակութեան կարօտ երկիրը, առանց ուշադրութեան, չը նայելով որ սորանցով աւելի հարստութիւն կարելի էր ձեռք բերել։

Համազասպ Մ. Սաֆրազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր Շամախու թղթակիցը գրում է մեզ՝ Շամախու մէջ ստացվում են հայոց պարբերական հրատարակութիւնները հետևեալ թւով՝ «Արարատ» 20 օրինակ, «Մշակ» 11 օրինակ, «Մեղու Հայաստանի» 9 օրինակ։ Մեր բողոքական եղբայրները (մօտ 100 տուն) ոչ մի հայ պարբերական հրատարակութիւն չեն ստանում, ըստ որում (ինչպէս ինքեանք են ասում) նոքա լցուած են հոգով սրբով։ Հայ երիտասարդաց մէջ մեծ հակումն կայ օրագիրներ կարդալու, իսկ ծերերը սիրում են կարդալ միայն երբ Շամախու վերաբերեալ յօդվածներ կան։

⁂

Նոյն տեղից գրում են մեզ՝ երկու ամիս սորանից առաջ մեր առաջնորդ Ս. Անդրէաս արքեպիսկոպոսի առաջարկութեամբ Նորին Վեհափառութիւնը կոնդակով արձակել է եկեղեցական պաշտօնից և պատուիրել է հարկատուաց թւում համարել երկու քահանաներին, նոցա ծայրայեղ մոլութեանց պատճառաւ։

⁂

Մայիսի 3-ին հինգշաբթի օրը հայ-դերասանները ներկայացրին Թիֆլիսի ամառվայ թատրոնում Շիլլէրի «Աւազակներ» դրաման։ Ensemble (ամբողջութիւնը) անթերի չէր ու շատերին ձանձրալի երևաց։ Բայց տիկին Սաթինիկը, պ. պ. Զմշկեանը, Աւալեանը և մանաւանդ Ամբրիկեանը, եթէ չասենք գերազանցեցին իրանց դերերում նոյն պիեսայի մէջ ռուս խմբի ներկայացնողներից, գոնէ կարող ենք ասել, որ նրանցից պակաս չէին։

⁂

Այս հինգշաբթի օրը պիտի ներկայացնեն «Շուշանիկ» ազգային ողբերգութիւնը։

⁂

Սուխում-Կալէից հաղորդում են մեզ, որ նոյն քաղաքում ծառայող Թիֆլիսեցի երկրաչափ Մ. Ս. Դու....րեանց յայտնի չէ ինչ պատճառներով ապրիլի 18-ին անձնասպանութիւն է գործել, դանակով կտրելով իւր կոկորդը։ Թէև բժիշկները գտան նրան դեռ ևս կենդանի, բայց հնարները իզուր անցան, և ողորմելին անասելի չարչարանքներից յետոյ վախճանվեցաւ։

⁂

Ինչպէս հաղորդած էինք՝ Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ սկսել են ընդհանուր ժողովների նստերը արուեստագործական ուսումնարանի և առևտրական դատարանի խնդիրների վրա։ Այդ նստերի հետևանքի վրա կը հաղորդենք։

⁂

Նորերումս Голосъ լրագրում տպվեցաւ մի նամակ Թիֆլիսից որտեղ խօսելով այստեղի դատարանների վրա, նամակագիրը գանգատում է թէ կովկասեան դատարանների գլխաւոր պակասութիւնը այն է, որ դատաւորների և դատաստանական ծառայողների մեծ մասը տեղացիք են, և այդ է պատճառ մեր դատաստանական հիմնարկութեանց անմխիթար դրութեան։ Թիֆլիսում հրատարակվող ռուս Тифлисскій Вѣстникъ լրագիրը պատասխանելով այդ մեղադրանքներին, ասում է՝ որքան մեզ յայտնի է թէ դատաւորները, թէ ուրիշ ծառայողները մի որ և է ռուս քաղաքում, օրինակ Տվէրում,—տվէրցիք են, Մոսկվայում,—մոսկվայեցիք,—ուրեմն նոյնպէս տեղացիք... սորանից պիտի դուրս բերել ուրեմն որ յիշեալ քաղաքներում դատաստանական հիմնարկութիւնների դրութիւնը աւելի էլ անմխիթար է։

⁂

Ստավրոպոլից գրում են С. Пет. Вѣд. լրագրին, որ նորերումս ներկայանում է այդտեղի մի ուսումնարան ժողովրդական ուսումնարանների տեսուչ և հաշիւ է պահանջում ուսումնարանի դրութեան և ընթացքի մասին։ Ուսումնարանի կառավարիչ տիկինը պահանջում է տեսուչից այն թուղթը, որ նրան իրաւունք է տալիս այցելութիւն անել ուսումնարաններին։ Բայց պ. տեսուչը թուղթը չէ տալիս, այլ խոստանում է ուրիշ անգամ ներկայացնել։ Այնուամենայնիւ նա պահանջում է որ ուսուցիչները լինին բարձր ուսում ստացածներ իսկ գիմնազիայից ատեստատով դուրս եկածները իրաւունք չունենան դաս տալ։ Տիկինը յուսահատված է, ասում է որ իր ուսումնարանը ժողովրդական ուսումնարանների տեսչին չէ կարող ենթարկվել, այլ հպատակում է դիրեկցիային և բացի սորանից եթէ նա չը պիտի ընդունի որպէս ուսուցիչ գիմնազիայում աւարտածներին, նա կը մնայ առանց ուսուցիչների, որով-

---

շակերտ Լազարեանց ճեմարանի ք. Պ. Պատկանեանը, որ այժմ պրոֆեսոր է Ս. Պետերբուրգեան համալսարանի, նշանաւոր է իւր համեմատական փիլոլոգիայի աշխատութիւններով, որ մի լոյս է ձգում հայոց լեզուի ծագման և նորա միւս լեզուների հետ ազգակցութեան վերայ։ Չէ կարելի չը յիշել և գրքասէր Յախվերդեանցին, որը ի լոյս ածեց Թիֆլիսի ջուլհակ բանաստեղծի, փիրուզ Սայաթ-Նովայի երգերը. և չը պէտք է մոռանալ պ. Մխիթարեանին և Գամառ Քաթիպայ կեղծ անուան տակ ծածկուած պարոնին, որոնց մենք պարտական ենք ժողովրդական երգերի ժողովածուի համար, ուր պիեսաների ընտրութիւնը արուած է խիստ ճաշակով և գործագիտութեամբ։ Նոցա հետ կապուած է Բրոսէ ակադեմիկոսի անունը, որ իւր աշխատութիւնների մէջ վրաց գրականութեան մասին, չը մոռացաւ և աւելի հարևան հայոց գրականութիւնը։ Կ. Պօլսում, ուր Մահմեդ երկրորդի տիրապետութիւնից յետոյ հաւաքվում են հայերի մի նշանաւոր մասը, գրականական շարժումը սկսուեցաւ աւելի վաղուց և շարունակվում է աւելի եռանդով քան ուրիշ տեղերում։ Ոմանք այնտեղի աշխատաւորութիւններից պատկանում են հին կլասիկական գրականութեան, իսկ ոմանք ստեղծագործուած են աւելի վերջին դարերում։ Այդ արդիւնաբերութեանց մեծ մասը ունէին կրօնական պարունակութիւն, բայց մի քանիսը, իւրեանց օրգանական կազմութեան մէջ պարունակում են և մանուկների կրթութեան առարկան։ Թարգմանութիւնները բաղկացնում են այդ տպագրութեանց ամբողջ մասը։ Կ. Պօլսեան գրագրութիւնքը չեն գերազանցվում առ հասարակ իւրեանց հաւատարմութեամբ և տպագրութեան կողմից շատ յետ են մնացել Վենետիկի Մխիթարեանների լոյս ընծայած գրքերից։ Այսու ամենայնիւ, վերջին ժամանակներում Կ. Պօլսի հայերը ի լոյս ածեցին երկու նշանաւոր պատմութիւններ՝ Սեբէոս եպիսկոպոսի պատմութիւնը, որ գրուած է եօթերորդ դարումը, Իրակլ կայսեր պատերազմների մասին Պարսիկների ու Արաբների դէմ, և պատմութիւնը Թովմա Արծրունու, որը ծագում էր Վասպուրականի այսինքն Մեծին Հայաստանի երևելի նահանգներից մէկի իշխանական տոհմից, որը տասներորդ դարումը գրեց այդ նշանաւոր ցեղի ծագման և նոցա [illegible] մասին։ Մեր ժամանակում այն բաժինը գրականութեան, որը աւելի զարգացած է մեր մէջ, որպիսի են՝ բանաստեղծութիւն, դրամաներ և քնարերգական բանաստեղծութիւնք, տարածուած են և Տաճկաստանի հայերի մէջ. առհասարակ Կ. Պօլսի հայերը յառաջադիմութեան կողմից կամենում են ազգի գլխաւորն ներկայացնել։ Նոցա միջանից [illegible] պարբերական հրատարակութիւնքը, որ սկսել է արդէն ունենալ զօրութիւն և նշանակութիւն։ Դոցա ներկայացուցիչը է «Մասիս» լրագիրը, որ է Պատրիարքի և ազգային սահմանադրութեան պաշտօնական օրգանը և բազմաթիւ օրագիրներ, և շաբաթաթերթեր և զանազան տեսակ [illegible]։ Որոշ մի ժամանակ դիմում էին հայերը դէպի Աթէն և Բիւզանդիայ ուսման համար, նոյնպէս և այժմ մանկահասակ հայերը դիմում են դէպի ժամանակակից Աթէնքը—Փարիզ, որպէս զի այստեղ կրթւելով մեր լուսաւորութեան լոյսով և երբեմն դժբախտաբար ընդունեն նորա պակասութիւնները։ Մանուկ հայերը, կրթութեան բարիքներից օգտւելու համար, մտնում են այստեղ իւրեանց ազգային դպրոցը, որ հիմնեալ է նոցա հայրենակից Սամուէլ Մուրադեանի բարերարութեամբ, կամ մեր ուսումնարաններում առնում են դասեր իրաւաբանութիւնից, բժշկութիւնից և վաճառականութիւնից։

Եւրոպայից դուրս, Թիֆլիզում, Էջմիածնում (Մեծին Հայաստանի.) Նախիջևանում Դոնի վերա, Կալկաթայում, Մադրասում, Երուսաղէմում,— ամէն տեղ, ուր հայերը ամբոխուած են, յայտնվում է նոցա մէջ սէր դէպի իւրեանց գրականութիւնը։ Այդ կողմերում տպագրուած գրքերը հասնում են մեզ շատ դժուարութեամբ և փոքր թւով, այդ պատճառաւ դժբախտաբար ես պէտք է սահմանափակուեմ խիստ սակաւ տեղեկութիւններով, թէև նոքա ևս բաւական կը լինէին ցուցանել մեր խնդիրը.—Թիֆլիզում նորին սրբազնութիւնը Սարգիս Ջալալեանցը, այդ քաղաքի վիճակաւոր առաջնորդը 1842 և 1850 թւերին տպագրեց երկու հատորով իւր ճանապարհորդութիւնը Մեծ Հայաստանում։ Նոցա մէջ նկարագրուած են ամէն տեղերի և վանքերի ու եկեղեցիների պատերի վերայ գտնուած արձանագրութիւնքը։ Մի և նոյն քաղաքում տպագրուեցաւ Էջմիածնայ վանքի ամենահարուստ գրատան ցուցակը։ Այդ ամենահին և պատկառելի վանքը է աթոռը ամենայն հայոց կաթողիկոսի, նա ունէ իւր տպարանը, ուր տպագրեցաւ, և շատ գրքերի հետ, երկու հատորով Շահխաթունեան եպիսկոպոսի տեղագրութիւնը Արարատեան նահանգի, Գլխաւորական վարդապետը իւր